

ԺԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԻ
ԶՈՒՐԱԲՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր, Երևանի Կոմիտասի անվ.
պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր
E-mail: zharmazurabyan@gmail.com
Doi:10.58580/18290019-2023.2.65-38

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 2.12.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.11.2023 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՍ

Ռոմանոս Մելիքյանը և հայկական ռոմանսի զարգացման ընթացքը

Ամփոփում

Հայ կոմպոզիտորական արվեստում առաջիններից մեկը Ռոմանոս Մելիքյանն էր, որ կապվեց երգի ու ռոմանսի ժանրի զարգացման հետ: Նրա վաղ շրջանի ռոմանսները ինչ-որ չափով հարում էին կենցաղային ռոմանսին: Դրանք քնարական թախծոտ, անձնական-ռոմանտիկ հույզերի արտահայտություն էին՝ հատկապես բնության հետ մարդկային հույզերի ունեցած հարաբերությամբ: Ավելի ուշ՝ Ռոմանոս Մելիքյանի ռոմանսային ոճի բարձրագույն արտահայտությունները եղան «Զար-վար» և «Զմրուխտի» փոկալ շարքերը ստեղծված 1916-1920-ական թվականներին: Դրանում է, որ կոմպոզիտորն առավելագույնս մոտ կանգնեց ժողովրդական երաժշտության ակունքներին, և կարողացավ իրավամբ ազգային հիմքերի վրա դնել հայկական ռոմանսի զարգացումը:

Բանալի քառեր. Ռոմանոս Մելիքյան, երգեր, ռոմանսներ, կենցաղային ռոմանս, հայկական ռոմանսի ազգային հիմքերը, երգային մեղեդի:

Abstract

Doctor of sciences [Arts], Professor of the Department of Music History at Yerevan Komitas State Conservatory **Zhanna Pyotr Zurabyan. "Romanos Melikyan and the Development Paths of Armenian Romance".**

Romanos Melikyan was among the first in Armenian compositional art to contribute to the development of the singing and romance genres. His early romances were somewhat aligned with the domestic romance genre, expressing lyrical melancholy and personal, romantic emotions, particularly in connection with nature. Later, the pinnacle of Melikyan's romance style was expressed in the vocal series "Zar-Var" and "Zmrukhti", created between 1916 and the 1920s. In these works, the composer closely approached the roots of folk music, successfully laying the foundation for the development of Armenian romance on genuinely national grounds.

Key Words: Romanos Melikyan, songs, romances, domestic romance, national foundations of Armenian romance, song melody.

Абстракт

Доктор искусствоведения, профессор кафедры истории музыки ЕГК **Жанна Петровна Зурабян. - "Романос Меликян и пути развития армянского романса".**

Романос Меликян одним из первых развил жанр песни и романса. Его ранние романсы были выражением лирических, личных, романтических переживаний. Высшими проявлениями романтического стиля позднего Романова Меликяна были вокальные циклы «Зар-вар» и «Змрукhti», созданные в 1916-1920 годах. В них композитор максимально приблизился к истокам народной музыки и смог по праву положить начало развитию армянского романса.

Ключевые слова: Романос Меликян, песни, романсы, бытовой романс, национальные основы армянского романса, песенная мелодия.

Նվիրվում է Ռ.Մելիքյանի ծննդյան 140-ամյակին

Հայկական ռոմանսի զարգացման ճանապարհներին XX դարի առաջին տասնամյակներում ստեղծվեցին և համերգային կյանք մտան մեծ թվով կենցաղային ռոմանսներ՝ բնույթով մատչելի, ժողովրդի մեջ տարածված քաղաքային երգերին բնորոշ մարդկանց ականջին սովոր երաժշտական դարձվածքներով: Դրանք քնարական, հուզաշատ երգեր էին, հաճախ անձնական ապրումներով ներշնչված՝ անպատասխան սիրո, լքված հոգիների, խաբված հույսերի տրտունջի մասին: Դրանցից լավագույնները հաստատուն տեղ գտան մեր ժողովրդի երաժշտական կենցաղում: Արմեն Տիգրայանի «Մև աչերեն», Արշակ Տեր-Հովհաննիսյանի «Մանուշակը», Դանիել Ղազարյանի «Ուռին», «Գիշերն եկավ», «Սար դարձել», «Քույր իմ նազելի», Անտոն Մայիլյանի «Ծովի երգը» և այլք:

Հայ կոմպոզիտորական արվեստում առաջիններից մեկը Ռոմանոս Մելիքյանի անունն էր, որ կապվեց երգի ու ռոմանսի զարգացման հետ: Նրա վաղ շրջանի ռոմանսներն ինչ-որ չափով հարում էին կենցաղային ռոմանսին: Դրանք քնարական թախծոտ, անձնական- ռոմանտիկ հույզերի արտահայտություն էին՝ հատկապես բնության հետ մարդկային հույզերի ունեցած հարաբերությամբ: «Աշնան երգ», «Վայրի ծաղիկ», «Վարդը», «Տարեք հովեր» և այլ ռոմանսներ, որ խմբվեցին «Հյուսիսային երգել» և «Աշնանային տողեր» շարքերում: Ավելի ուշ Ռոմանոս Մելիքյանի ռոմանսային ոճի բարձրագույն արտահայտությունները եղան «Ջար-վառ» և «Զմրուխտի» վոկալ շարքերն ստեղծված 1916-1920-ական թվականներին: Դրանում է, որ կոմպոզիտորն առավելագույնս մոտ կանգնեց ժողովրդական երաժշտության ակունքներին, և կարողացավ իրավամբ ազգային հիմքերի վրա դնել հայկական ռոմանսի զարգացումը:

Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» և «Ջար-վառ» շարքերի բոլոր ռոմանսները գրված են հայ բանաստեղծների տեքստերով: Ընդ որում, նա մեծ մասամբ ընտրել է ժողովրդական լեզվի դարձվածքներով հարուստ տեքստեր՝ Հովհաննես Թումանյանի, Աթաբեկ Խնկոյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ավետիք Բասիակյանի բանաստեղծական տողերը:

Իր ռոմանսներում Ռոմանոս Մելիքյանն իրավամբ հասավ խոսքի ու երաժշտության փոխկապակցվածությանը, բայի երգեցողությամբ: Եվ, հատկանշական է, որ խոսքի ու երգի մերձեցումը չխանգարեց կոմպոզիտորին ստեղծելու լայնաշունչ երգային մեղեդիներ: Նույնիսկ արտասանական, ասերգային ֆրագները նրա մոտ ենթարկված են երգամտածողությանը: Եվ, դրանում զգալի դեր է խաղում կապը հայ գուսանաաշուղական երգերի հետ, նրանցում ասերգային բնույթի մեղեդիների ազատ՝ իմպրովիզացիոն բնույթի հատկանիշների հետ, որոնք լայն շունչ ու խորը զգայականություն են հաղորդում երգին:

ՆԱՌԱՍՅ՝ ՂՈՒՄԻՏՅԱՆ



Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի 100-ամյա և Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 140-ամյա հոբելյանական գիտաժողովի մասնակիցները, անվանակոչված նրա անունով դահլիճում, 2023 թ. Ժ. Պ. Զուրաբյան, Ա. Գ. Բուդաջյան, Ա. Գ. Խաչատրյան, Լ. Զ. Մահակյան, Ա. Գ. Ասատրյան (ՀՀ ԳԱԱ ԱԻ տնօրեն և համակարգիչ), Տ. Ռ. Շախկուլյան: Քոլեջի դասախոսական կազմը նաև Ն. Ա. Մահակյան, Ա. Զ. Կոստանյան, Ն. Զ. Ավետիսյան

Participants of the scientific conference dedicated to the 100th anniversary of the Romanos Melikyan Music College and the 140th birth anniversary of Romanos Melikyan, held in the hall named after him, 2023. J. P. Zurahyan, A. G. Budaghyan, A. V. Khachatryan, L. Z. Sahakyan, A. G. Asatryan (Director of the Institute of Arts of NAS RA and co-organizer), T. R. Shakhkulyan. Faculty of the College also N. A. Sahakyan, A. H. Kostanyan, N. Z. Avetisyan

Участники юбилейной конференции к 100-летию музыкального колледжа им. Романоса Меликяна и 140-летию со дня рождения Романоса Меликяна в зале его имени, 2023. Ж. П. Зурабян, А. Г. Будагян, А. В. Хачатрян, Л. З. Саакян, А. Г. Асатрян (директор ИИ НАН РА и соорганизатор), Т. Р. Шахкулия. Преподавательский состав колледжа, кандидат искусствоведения И. А. Саакян, А. А. Костанян, кандидат искусствоведения Н. З. Аветисян.

Հեղինակի մասին. ԺԱՆՆԱ ՊԵՏՐՈՍԻ ԶՈՒՐԱԲՅԱՆ (ծնվ. 30.08.1941 թ. ք. Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): 1966-ին ավարտել է ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (ղեկ.՝ պրոֆ. Ա. Ա. Բարսամյան): Դասավանդել է՝ 1977-ից ԵՊԿ-ի երաժշտության պատմության ամբիոնի՝ դասախոս, 1963-1980 թթ., երաժշտության տեսություն Երևանի Սայաթ-Նովայի անվ. ՄԵԴ: 1984 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, 1988 թ. դոցենտ, 1996թ.՝ պրոֆեսոր: 1992-ից Ջ. նաև ԵՊԿ-ի գիտական քարտուղարն է: Պաշտպանել է դոկտորական ատենախոսություն 2013-ին ՀՀ-ում: Նա հասարակական-կազմակերպչական գործունեություն է ծավալել. եղել է երաժշտական տարբեր հանձնախմբերի ու գեղարվեստական խորհուրդների, ՀՀ վարչապետին կից Կանանց հանրապետական խորհրդի, 1981-ից ՀՀ ԿՄ անդամ, 1982-1991 թթ. երաժշտագիտական սեկցիայի ղեկավար, 1982-2013 թթ. վարչության անդամ: Պարգևատրվել է ՀՀ Նախագահի «Մովսես Խորենացի» մեդալով (2013 թ.): Հեղինակ է՝ մենագրությունների՝ Ա. Աճեմյան, Եր., 2006 թ., Բնտոնացիոն ակունքները և թեմատիզմի ազգային ինքնատիպությունը հայ սիմֆոնիկ երաժշտության մեջ (1950-1960 թթ.), Եր., 2002 թ., (ռուս. լեզվով), Երաժշտության աշխարհում, (համահեղինակ՝ Ռ. Եսայան), գիրք 2, հայկական օպերա, Եր., 2006 թ., շուրջ 40 գիտական հոդվածների՝ ժողովածուներում, երաժշտական հանրագիտարաններում (Երևան, Լոնդոն, Չիկագո, Դետրոյթ և այլն) նաև պարբերական մամուլում: Հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում (Երևան, Մոսկվա, Լենինգրադ, Տալլին, Վիլնյուս, Դուշանբե, Քեմբրիջ-ԱՄՆ և այլն): 400-ից ավելի ներածական խոսք ԿՄ, Երաժշտական ընկերության, դպրոցականի ֆիլիարմոնիայի «Գիտելիք» ընկերության, կոնսերվատորիայի երաժշտական միջոցառումներին, համերգներին, հեռարձակվել է 200-ից ավելի ռադիո-հեռուստահաղորդումներ, այդ թվում նաև թեմատիկ հաղորդաշարեր՝ «Հայկական ռոմանս», «Դեմիրճյան -75», «Երաժշտական հանրագիտարան», «Ռուսական երաժշտության դասականները», «Քո սիրած կոմպոզիտորները», «Հայ կոմպոզիտորների նոր երկերը», և այլն, նաև երաժշտության դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների մասնագիտական խմբագրումներ: Մենագրություն «Սոնդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2013:

Об авторе: ЖАННА ПЕТРОВНА ЗУРАБЯН (род. 30. 8. 1941, г. Кировакан, ныне Ванadzor). Окончила музыковедческое отделение Ереванской государственной консерватории им. Комитаса, класс проф. А. А. Барсамян (1966). Преподаёт: теорию музыки в музыкальной школе им. Саят-Нова (1963-1980), на кафедре истории музыки ЕГК (с 1977). Кандидат искусствоведения (1984), доцент (1988), профессор (1996). Ученый секретарь консерватории (с 1992). Член различных жюри и художественных советов: Женского республиканского совета при Председателе правительства, СК РА (с 1981), музыковедческой секцией (1982-1991), член правления СК РА (1982-2013). Награждена Президентской медалью РА "Мовсес Хоренаци" (2013). Автор монографий: Александр Аджемян., Ер., 2006; Интонационные истоки и национально-тематическое своеобразие армянской симфонической музыки (1950-1960), Ер., 2002 (на русс. языке); В мире музыки (соавтор Р. Есаян), книга 2; Армянская опера, Ереван, 2006. Автор более 40 научных статей в сборниках, музыкальных энциклопедиях (Ереван, Лондон-Чикаго, Детройт и т.д.), в периодических изданиях. Выступала с докладами на международных и республиканских конференциях (Ереван, Москва, Ленинград, Таллин, Вильнюс, Душанбе, Кеймбридж - США и т.д.). Выступала со вступительным словом в концертах и мероприятиях СК РА, в Му школьном обществе РА, "Филармонии школьника", обществе "Знание", ЕГК (400). Автор радио и телепередач, в том числе, тематических программ: "Армянский романс", "Демирчян -75", "Музыкальная энциклопедия", "Классики русской музыки", "Твой любимый композитор", "Новые сочинения армянских композиторов" и т.д. (более 200). Профессиональный редактор музыкальных учебников и учебных пособий.

About the author: ZHANNA PETROS ZURABYAN (born 30.08.1941, Kirovakan, present Vanadzor). In 1966 graduated from the Department of Musicology at the YSC (prof. A. Barsamyan's class). Since 1977 she is a lecturer at the Department of Music History at the YSC. From 1963 to 1980 she taught Music Theory at Yerevan Sayat-Nova Music School. In 1984, Zurabyan defended her PhD thesis, she became Docent (1988), and Professor (1996). Since 1992 she was the Academic Secretary at the YSC. She has been involved in public and administration activities and served on various jury panels and arts councils. She was a member of Women's republican council at the Prime Minister's Office. Since 1981 she is the member of the Union of Composers of the RA, from 1982 to 1991 as the Chair of the Section of Musicology; in 1982-2013 as a Board member of the UC. Zurabyan was awarded with the Movses Khorenatsi Presidential Medal of RA (2013). She is the author of the following monographs: Alexander Ajemyan, Yerevan, 2006; The Intonational Origins, and National and Thematic Identity of the Armenian Symphonic Music (1950-1960), Yerevan, 2002 (in Russian); In the World of Music (in co-authorship with R. Esayan), Vol. 2; The Armenian Opera, Yerevan, 2006. She is the author of more than forty articles in scientific collections, music encyclopedias (Yerevan, London-Chicago, Detroit, etc.), and in periodicals. She presented papers at various international and republican conferences (Yerevan, Moscow, Leningrad, Tallinn, Vilnius, Dushanbe, Cambridge (USA), etc.). Presented opening speeches for numerous concerts and events, organized by UC of the RA, the Musical Society of the RA, by the Schoolchildren Philharmony, the Knowledge' Society, and the YSC (400). She is the author of radio and television programs, including series of programs, such as The Armenian Romance, Demirchyan-75, Music Encyclopedia, The Russian Classics, Your Favorite Composer, New Works of Armenian Composers (more than 200 broadcasts), etc. Zhanna Zurabyan is a professional editor of music textbooks and manuals.